Հաստատված է՝

Հայկական բժշկական ինստիտուտի

Ռեկտորի 26.08.2015թ.

թիվ 535/2 հրամանով

Ընդունված է՝

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 26.08.2015թ.

թիվ 33 նիստում

Լ.Գ. Ասատրյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 201

Կարգ

Հայկական բժշկական ինստիտուտի

ուսումնական գործընթացում կրեդիտային համակարգի կազմակերպման

ՀԲԻ-ում կիրառում է ԵՍՏՀ (ECTS Եվրոպական ստուգարքային տեղափոխման համակարգը) Կրեդիտների կուտակման համակարգը, սկսած 2006-2007 ուստարուց, համահունչ է Բոլոնիան գործընթացի զարգացումներին և համաձայն ՀՀ Կառավարության 22/12/2005 թիվ 2307-Ն Որոշմամբ ինչպես նաև ՀՀ ԿԳՆ 19/06/2007, թիվ 588-Ա/Բ հրամանով հաստատված Կարգի:

ՀԲԻ կրեդիտային համակարգի ամբողջական (փոխանցման և կուտակման) կիրառմանը անցել է 2011/2012 ուստարվանից կրթական կրեդիտների որպես ուսումնական ծրագրերի պարտադիր տարր ներմուծմամբ և ուսանողների ակադեմիական տեղեկագրերում դրանց պարտադիր նշումով: Ձեռք բերված կրեդիտները հնարավոր չէ կորցնել:

Կրեդիտային համակարգ

Ակադեմիական կրեդիտը՝ դա ուսանողի ուսումնական բեռնվածության չափման պայմանական միավորն է, որն անհրաժեշտ է ուսումնական առարկայի կամ մոդուլի արդյունքներին հասնելու համար: Ուսման պրոցեսի ընթացքում հստակ որոշվում է կրեդիտների այն մինիմալ քանակը, որն անհրաժեշտ է այս կամ այն որակավորման աստիճան ձեռք բերելու /բակալավր, մագիստրոս, դիպլոմավորված մասնագետ/, ուսումնական դիսցիպլինաների և մոդուլների բովանդակության, պարտադիր/յուրացվում են սահմանված կիսամյակներում/ և էլեկտիվ/ընտրում է ուսանողը/ կուրսերի թվարկման, յուրաքայչյուր դիսցիպլինայի կրեդիտային արժեքի համար: ՀԲԻ-ի մեկ ուստարվա ծանրաբեռնվածությունը կազմում է 60 ակադեմիական կրեդիտ կամ 1800 ժամ /1կրեդիտը=30ժամ/:

Ակադեմիական տեղեկագիրը օգտագործվում է ուսանողի ուսումնական գործունեությունը և առաջադիմությունն ուսման որոշակի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար՝ ուսումնասիրած դասընթացների շնորհված կրեդիտների և ստացած գնահատականների գրանցման միջոցով: Այն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

Միջին որակական գնահատականը /ՄՈԳ/ գնահատականների կրեդիտներով կշռված միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների վրա բաժանելով: Տարբերում են կիսամյակային/հաշվարկված առանձին կիսամյակի համար/ և ամփոփիչ/հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար/ վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

ՄՈԳ= ՎՄ/ԳԿ

ՎՄ – վարկանիշային միավոր ՎՄ= ∑Կ*Գարդ որտեղ Կ – կրեդիտ, Գարդ – արդյունարար գնահատական

ԳԿ= ∑Կ ∑Կ – վաստակած կրեդիտների գումար

Կրեդիտային համակարգի տարրերից են ուսումնական ծրագիրը/պլանը/ և ավարտական պահանջները: Ուսումնական ծրագիրը/պլանը/ ներկայացվում է պարտադիր և ընտրովի

դասընթացների ցանկով: Յուրաքանչյուր դասընթացի համար պլանում նշվում է առարկայի տևողությունը ըստ կիսամյակների, դասընթացի վարման ձևը/դասախոսություն, գործնական/, կրեդիտների քանակը, ժամաքանակը, շաբաթվա ծանրաբեռնվածությունը և ելքային արդյունքը/ստուգարք, տարբերակիչ ստուգարք, քննություն/:

Կիսամյակի սկզբից մեկ շաբաթ առաջ հրապարակվում է դասընթացների և քննությունների ժամանակացույցը, որը տեղեկատվություն է տալիս դասընթացների կայացման վայրի, դասախոսի, քննությունների օրերի վերաբերյալ:

Եթե ուսանողը չի հավաքում տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների կրեդիտները, ապա նա որպես փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանող, հնարավորություն ունի ուղղել թերացումները և բարձրացնել ուսման առաջադիմությունը մեկ ամիս տևողությամբ փորձաշրջանի ընթացքում: Եթե այդ ընթացքում ուսանողը չի դուրս գալիս փորձաշրջանից, ապա նա դառնում է հեռացման ենթակա: Պայմանագրի համաձայն հեռացման ենթակա են երեք առարկայական պարտք ունեցողները/մեկ ստուգարք և երկու քննություն կամ երեք քննություն/: Եթե ուսանողի չհավաքած կրեդիտները գերազանցում է 12-ը՝ նա հեռացվում է ինստիտուտից: ՀԲԻ-ից այլ բուհ կամ այլ բուհից ՀԲԻ տեղափոխվելու դեպքում գումարային կրեդիտների քանակը չպետք է գերազանցի 20կրեդիտ:

Դրական գնահատված դասընթացի քննության վերահանձնում չի թույլատրվում: Անբավարար գնահատված դասընթացի վերահանձնումը կատարվում է 2 փուլով ըստ ժամանակացույցի /վերաքննության առաջին և երկրորդ ժամանակահատվածների միջև հնարավորություն է տրվում բարձրացնել ուսանողի առաջադիմությունը՝ կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ/: